ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ, ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Դ. ԱՎԱԳՅԱՆ

Պրոֆ. Մ. Աբեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» մեծարժեք աշխատության մեջ, խոսելով պարագաների տեսակների մասին, նշում է նաև «եղանակի պարագան», որը «ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը դեպի խոսքի բովանդակությունը»[1]։ Որպես այդպիսիք նա ակնարկում է անպատճառ, գուցե, իսկապես եղանակավորող բառերը։ Զմոռանանք ասել, որ Մ. Աբեղյանը ընդգծված բառերն առանձնացրել է որպես առանձին բառահամակարգ՝ «եղանակական բառեր կամ մասնիկներ» անվամբ[2]։

Պրոֆ. Ս. Ղազարյանն իր «Հայոց գրական լեզվի պատմության» մեջ «Պարագաներ» ընդհանուր խորագրի տակ քննում է նաև «եղանակի պարագան»՝ նշելով հետևյալ տեսակները՝ հաստատական, հարցական, ժխտական, երկբայական, սահմանափակման, սաստկական։ Ի դեպ, հարցը քննվում է դրաբարի առումով։ Վ. Առաքելյանն իր «Հայերենի շարահյուսություն» աշխատության մեջ (հատ. Ա) արդյոք, կարծես, ասես, գրեթե, կարծյոք, գուցե, գուցե թե, թերևս, համարյա, համարյա թե, հավանորեն, իցե թե, մի՞թե, ըստ երևույթին, դժվար թե, իբր թե բառերը դիտել է որպես վերաբերմունքի պարագա, իսկ իհարկե, հավաստյավ, իրոք, անշուշտ, անպատճառ, անկասկած, հարկավ, իսկապես, արդարև, իրավ (որ) և անպայման բառերը՝ հավաստիության պարագա[4]։

Այնուհետև Վ. Առաքելյանը գրում է, որ վերաբերմունքի պարագաները դիտվում են որպես եղանակավորող բառեր։

Այստեղից դժվար չէ ենթադրել, որ Վ. Առաքելյանը եղանակավորող բառերին վերագրում է նախադասության անդամի (պարագայական) դեր։ Եղանակավորող բառերը կարող են դրվել և՛ ամբողջ նախադասության, և՛ նախադասության որևէ անդամի, և՛ նույնիսկ նախադասությունների վրա. ուրեմն՝ նրանք ունեն ընդգրկման լայն շրջանակներ։ Նշենք, սակայն, որ նրանք հիմնականում դրվում են նախադասության բայ-ստորոգյալի վրա, որոնք առանձին վերցրած նախադասության արժեք ունեն։ Բայց ստորոգյալի վրա են դրվում ամենից առաջ մակբայները։ Քանի որ մակբայները այն խոսքի մասն են, որից առատորեն առաջանում են եղանակավորող բառեր, ապա այն մակբայները, որոնք իմաստային և հնչերանգային իրենց հատկանիշներով արդեն վերածվում են եղանակավորող բառերի, կարող են մասամբ պահել մակբա-

---

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 381։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 131։

3 Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հատ. Ա, Երևան, 1966, էջ 471, 478։

4 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. Ա, Երևան, 1958, էջ 394։

յական որոշ հատկանիշ, այսինքն՝ այս դեպքում միևնույն բառի մեջ կարող են հանդես գալ երկու խոսքամասային տարրեր՝ մակբայական և եղանակավորական։ Այստեղ է, որ այդ բառերը դառնում են նախադասության անդամներ (պարագաներ)։

Ահա դրանք. անպայման, անկասկած, անպատճառ, ամենևին, առանձնապես, բնավ, իսկապես, իրավ, իսկականից, մասնավորապես, պարզապես, վերջապես, վերջիվերջո, իվերջո, փաստորեն *և այլն։*

Նշենք նաև, որ սրանց մեջ կան այնպիսիք (անկասկած, իսկապես, իրավ, իսկականից, անպատճառ, պարզապես, փաստորեն...), *որոնք գրեթե ամբողջապես եղանակավորող բառեր են։*

Այս բառերից շատերը մակբայ են դառնում՝ հատկապես դրվելով բայական բաղադրյալ ժամանակով գործածված բայ-ստորոգյալից առաջ, որոնց հաճախ հաջորդում է օժանդակ բայը, ապա նոր՝ դերբայը։ (Անպատճառ ես գալու։ Անպայման եք գնալու։ Իսկապե՞ս ես ասում։ Ճշմարի՞տ եք ասում և այլն)։ Այստեղ, ինչպես նկատում ենք, շեշտվում են այդ «մակբայները» և ձուլվում բայ-ստորոգյալին՝ ցույց տալով գործողության և եղելության ձևը կամ որակը, պատասխանելով կոնկրետ *հարցի։*

Ավելին. եղանակավորող բառերը կարող են դրվել նաև ածականների վրա՝ նրանց հաղորդելով զանազան երանգներ, այսինքն՝ խոսողն այդ բառերով կարտահայտի իր վերաբերմունքը առարկայի հատկանիշի նկատմամբ, քանի որ եղանակավորող բառերը ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը՝ առարկայի, գործողության-եղելության, նրանց հատկանիշների, ապա հատկանիշի հատկանիշի, խոսքային արտաստության նկատմամբ։

Հ. Օհանյանը իրավացիորեն նշում է[5]*. որ եղանակավորող բառերը, «կապակցվելով ածականների հետ, նրանց հաղորդում են այս կամ այն երանգը, այսինքն՝ արտահայտում են խոսողի վերաբերմունքն առարկայի հատկանիշի նկատմամբ»։*

Նա գրում է, որ հաստատական *երանգավորում են հաղորդում իսկապես, իրոք, անշուշտ,* սաստկական՝ *մինչև անգամ, մինչև իսկ, մանավանդ, հատկապես, նույնիսկ,* սահմանափակման *և* երկբայական՝ *լոկ, միայն, գոնե, կարծես, գուցե, թերևս, համարյա (թե), իբր թե և այլ բառերը։ Այնուհետև, Հ. Օհանյանն ավելացնում է. «Եղանակավորող բառերը կտրող են լրացում դառնալ որոշիչի, ստորոգելիական վերագրի, ենթակայի և պարագայի պաշտոնով հանդես եկող ածականներին» (էջ 173)։*

Հարց է ծագում՝ ինչպիսի՞ լրացումներ կարող են դառնալ եղանակավորող բառերը։ Եթե «որոշչի, ստորոգելիական վերագրի, ենթակայի և պարագայի պաշտոնով հանդես եկող ածականների» վրա դրվելով, նրանք «լրացում են դառնում», ապա ի՞նչ անուն տանք այդ «լրացմանն ու լրացյալին»։

Եթե եղանակավորող բառերը, դիցուք՝ ածականների վրա դրվելով, արտահայտում են խոսողի վերաբերմունքը առարկայի հատկանիշի նկատմամբ, ապա էլ ի՞նչ լրացումի մասին է խոսքը։

Հայտնի է, որ նախադասության անդամ են համարվում այն բառերը, որոնք կատարում են որևէ կոնկրետ պաշտոն, բերականորեն *կապվում են նախադասության մտքի հետ՝ պատասխանելով որոշակի հարցի։ Եղանակա-*

---

[5] Հ. Օհանյան, Ածական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 172։

վորող բառերը հավասարապես կարող են դրվել թե՛ նախադասության որևիցե անդամի վրա, թե՛ նախադասությունների, հնչերանգով բաժանվել այդ նախադասության անդամներից՝ քերականորեն չկապվելով նրանց հետ։ Նրանք կոնկրետ հարցի չեն պատասխանում և լրացում-լրացյալի կապակցություն չեն կազմում (լեզվում չկան, ասենք «երևի գրիչ», «միթե կարմիր», «կարծես հինգ», «ի դեպ ես», «ահա արագորեն» և նման «կապակցություններ»)։

Բավական է ընդգծված «կապակցությունները ստորոգել», և մենք կունենանք նախադասություններ՝ Երևի գրիչ է։ Մի՞թե կարմիր է...։ Սա նշանակում է, որ եղանակավորող բառերը «լրացնում են» նախադասությանը, ստորոգմանն առհասարակ։ Որ նրանք անդամ դիմավոր բայի վրա չեն կարող դրվել, վկայում են նաև այլ փաստեր։ Դիցուք՝ Երևի գրում է, Ահա խոսում է արտահայտություններում թվում է թե ընդգծված բառերը դրվել են դիմավոր բայերի վրա, հետևաբար նրանց լրացումներն են, այսինքն՝ մակբայ են։ Բայց հայտնի է, որ մակբայները հավասարապես դրվում են բայի և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերի վրա (եթե, իհարկե, մի կողմ թողնենք այն, որ մակբայները առարկայական (օբյեկտիվ) հատկանիշներ արտահայտելով հանդերձ, նախադասության որևէ անդամի վրա դրվելով, դառնում են նրա լրացումը, հետևաբար հնչերանգով կապվում են նախադասության մտքի հետ պատասխանելով կոնկրետ հարցի)։ Արդ՝ եթե ճիշտ են Արագ գնում է, Դանդաղ շորանում է, ապա ճիշտ է նաև արագ գնալ, դանդաղ շորացող... և, հետևաբար, եթե ճիշտ են Երևի գնում է, Ահա խոսում է արտահայտությունները, ապա ճիշտ պիտի լինեն նաև Երևի գրել, ահա խոսելու և այլն (խոսքն, անշուշտ, բայական անդեմ նախադասություններին չի վերաբերում)։ Բայց լեզվում Երևի գրել, ահա խոսել և նման «լրացում-լրացյալներ» չկան։ Մնում է եզրակացնել, որ կոնկրետ դեպքում Երևի և ահա եղանակավորող բառերը դրվել են նախադասության (ստորոգման) վրա և ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը արտահայտված մտքի նկատմամբ։ Ընդգծյալ և մյուս եղանակավորող բառերը կարող են դրվել նաև թե՛ գոյականի, թե՛ բայ-ստորոգյալի լրացումների վրա, ուստի նրանք նախադասության անդամ դառնալ չեն կարող։

Մի փաստ ևս. մակբայները չեն գործածվում բաղադրյալ ստորոգյալների հետ (խոսքը նրանց փոխանվանական կիրառությանը և վերացական բայերով կազմվող բաղադրյալ ստորոգյալներին չի վերաբերում), իսկ եղանակավորող բառերը գործածվում են (Թերևս հազար էին։ Արդյո՞ք նա է։ Իրո՛ք կարմիր է), որովհետև նրանք, այսպես կոչված, «ստորոգման լրացումներ են»։

Եղանակավորող բառերը (քիչ բացառությամբ) ունեն անջատական ուրույն հնչերանգ։ Դա նշանակում է, որ նրանք այդ հնչերանգի շնորհիվ քերականորեն չեն կապվում նախադասության անդամների հետ, այլ դրվելով նախադասության կամ նրա որևէ անդամի վրա, դրսևորում են սուբյեկտիվ զանազան վերաբերմունք։ Ուրեմն՝ նախադասության անդամ չի համարվի այն բառը, որը հնչերանգով բաժանվի նախադասության անդամներից, քերականորեն չկապվելով նրանց հետ և հավասարապես դրվելով թե՛ նախադասության ամեն մի անդամի և թե՛ նախադասությունների վրա։

Այնուհետև։ Հայտնի է, որ պարագաները ցույց են տալիս գործողության և եղելության առարկայական (օբյեկտիվ) հատկանիշներ (տեղի, ժամանակի, հիմունքի, պատճառի, ձևի...), այսինքն՝ բայ-ստորոգյալի լրացումներ են։ Արդ՝ եթե եղանակավորող բառերը դրվում են թե՛ գոյականի, թե՛ ածականի,

թե՛ թվականի, թե՛ դերանվան, թե՛ մակբայի, թե՛ նախադասությունների ու բառակապակցությունների, թե՛ դիմավոր բայ-ստորոգյալի վրա (որն իհարկե նախադասության արժեք ունի շարահյուսական մակարդակում, և կասկածելի է, թե եղանակավորող բառերը դիմավոր բայ-ստորոգյալի վրա են դրվում, թե՞ յուրահատուկ նախադասության), ապա մենք իրավունք չունենք դրանք կոչելու պարագա (այն էլ՝ եղանակի)։ Հարցը ինքնըստինքյան պարզ է՝ եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն դառնում։ Ավելին. եղանակավորող բառերն ու ձայնարկությունները իրենց խոսքամասային ընդհանուր հատկանիշներով և շարահյուսական կիրառությամբ հակադրվում են «նյութական» և «ոչ նյութական» մյուս խոսքի մասերին։ Ուրեմն, եղանակավորող բառերը հակադրվում են ձայնարկություններին հիմնականում իրենց դատողական վերաբերմունք արտահայտելու համար։ Զմոռանանք ընդգծել, որ թե՛ եղանակավորող բառերը, թե՛ ձայնարկությունները արտահայտում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը։ Այսպիսով, եթե ձայնարկությունները նախադասության անդամ չեն դառնում, ապա եղանակավորող բառերն էլ չեն դառնա։

Եղանակավորող բառերն ըստ իրենց արտահայտած իմաստի, ավելի կամ պակաս չափով կարող են դրվել նախադասության թե՛ դրական, թե՛ ժխտական խոնարհման բայ-ստորոգյալների վրա։ Ուշագրավ է Պ. Պողոսյանի հետևյալ միտքը. «Դրական լեզվում կրկնակ բայ-ստորոգյալներից մեկը, որն արտահայտում է հիմնական գործողությունը, մնում է իր բայաձևով և դառնում ստորոգյալ, իսկ մյուսը՝ վերածվում է կա՛մ եղանակավորող բառի, կորցնելով իր ստորոգման հատկությունը և կա՛մ փոխում է իր գոյը ու դառնում դերբայ՝ նախադասության մեջ վերածվելով ստորոգյալից կախված կախյալ բառի։ Առաջին ճանապարհով են եղանակավորող բառերի և կապակցությունների վերածվել ըղձականով դրված այնպիսի բառեր, ինչպես՝ կարծեմ, կարծես, կարծեք, երևի, ասես, համարյա, տեսնես, չլինի (թե), (հեռու) լինի, (աստված) ոչ անի (աստված հեռու) տանի, (աստված) աղատի և այլն»[6]։

Պ. Պողոսյանի նշած եղանակավորող բառերը դրվում են ո՛չ միայն բայ-ստորոգյալի, այլև նախադասության նաև ուրիշ անդամի, նախադասության ու նախադասությունների վրա։

Եղանակավորող բառերը կազմում են բառ-նախադասություններ։ Դրանք իրենց այդ շարահյուսական դերը դրսևորում են հիմնականում տրամախոսությունների մեջ։

Ս. Աբրահամյանն իր «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» աշխատության մեջ նշում է, որ եղանակավորող բառերը կազմում են հաստատական, ժխտական, երկբայական բառ-նախադասություններ։

Եղանակավորող բառ-նախադասությունները լինում են մի քանի տեսակ՝ հաստատական, ժխտական, երկբայական, հարցական, հորդորական, արտահայտչական և այլն։ Բերենք օրինակներ.

ա) Հաստատական.

— Աշակերտները արդեն գնացե՞լ են էքսկուրսիա։

— Իհարկե։

---

6 Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959, էջ 164։

— *Ասում են՝ Մոսկվա են տանելու, հա՞։*
— Այո, անկասկած։
բ) ժխտական.
Ոչ, *դու ապրում ես առաջնորդ (Ն. Զարյան)։*
Չէ, *չի լռել մեծ Շոթայի երգի ձենը կաթոգին (Հ. Թումանյան)։*
— *Էլ չի՞ գալու ինձ հետ։*
— Բնավ։
գ) երկբայական.
Արայիկը եկե՞լ է դպրոց.
— Կարծես։
— *Նա այսօր հերթապահե՞լ է։*
— Ըստ երևույթին, *թե չէ դասարանն այսքան մաքուր չէր լինի։*
դ) հարցական.
— *Աշոտն արդեն ավարտել է դպրոցը։*
— Մի՞թե։
— *Այո՛, նույնիսկ ամուսնացել է։*
— Արդյո՞ք։
— *Իհարկե, մեր հարևանն է։*
ե) հորդորական.
Կարելի՞ է ներս տանել։
— Խնդրեմ։
զ) արտահայտչական[7].
— *Ես բերել եմ Ձեր պատվերը։*
— Ապա՛, ապա՛։
— *Ձեմ բացի։*
— Դե՛, դե՛։

Հայտնի է, որ թերի է կոչվում այն նախադասությունը, «որի այս կամ այն անդամը պակասում է», և «նախադասությունը թերի է համարվում նույնիսկ այն դեպքում, երբ որևէ լրացում է պակասում, օրինակ՝

— *Ո՞վ կարող էր ջնջել Մարդպետական իշխանությունը։*
— *Իմ թագավոր ամուսինը»։*

Այդպես չեն, սակայն, բառ-նախադասությունները։ «Բառ-նախադասություն են կոչվում այնպիսի բառերը կամ առանձին մասերի չբաժանվող ամբողջական բառակապակցությունները, որոնք լրացումներ չեն ընդունում և արտահայտում են ժխտում կամ հաստատում, համաձայնություն ու անհամա-

---

7 *Արտահայտչական բառ-նախադասություն ենք համարում նաև այն եղանակավորող բառերով, ձայնարկություններով կազմվածները, որոնք ցույց են տալիս խոսակցի զգացական-կամային վերաբերմունքն արտահայտված մտքի նկատմամբ, ինչպես նաև նյութական իմաստ ունեցող այն բառերը, որոնց մեջ գերակշռում է հուզական-զգացական նրբերանգը։*

— *Սուրենը հիվանդանոցո՞ւմ է, հա՞։*
— Դժբախտաբար։
Արդեն վիրահատել են Սուրենին։
— Ցա՜։
— Բա՛։
— Խե՜ղճ։

ձայնություն, դրդում, եղանակային ու արտահայտչական գնահատություն՝ ամբողջ նախորդ ասվածի»[8]։

Ուրեմն՝ բառ-նախադասությունները լրացումներ չեն ընդունում, նախադասության անդամ չեն լինում և բաղկացուցիչ մասերի չեն բաժանվում։

Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերից ցուցական տեսակին պատկանողները կազմում են անվանական նախադասություններ։ Օրինակներ.

Ահա և քարվանսարան (ԱԲԵ, էջ 30)։ Ահա և մի արտ՝ քարե պատով (նույն տեղում, էջ 133)։ Հրեն Բողարը (նույն տեղում)։

Թող-ով կազմվում է նաև անենթակա նախադասություն (Թող խոսեն։ Թող բամբասեն)։

Որոշ եղանակավորող բառեր ակտիվորեն մասնակցում են նաև բացականչական նախադասությունների կազմությանը։ Դրանք են՝ երնեկ թե, ուր է, դե, դեհ, այ, թող, այո, հա, չէ, ոչ, կեցցես, կեցցեք և այլն։ Օրինակներ.

Ո՞ւր էր թե ինձ էլ որսի տանեիք։

Կեցցե՛ք, տղանե՛ր, այսօր շատ լավ աշխատեցիք։

— Դե՞հ, կորե՛ք, աչքիս էլ չերևաք։

Հասկանալի է, որ մասնավորապես հարցական եղանակավորող բառերը, ինչպես նաև հարցական հնչերանգով մյուս եղանակավորող բառերը կարող են կազմել հարցական բնույթի նախադասություններ, իսկ հատկապես հաստատական, զիջական, անջատական-լրացական, մասնական, սաստկական եղանակավորող բառերը՝ պատմողական։ Կամային և ժխտական տեսակի մեջ մտնողները ավելի շատ հրամայական բնույթի նախադասություններ են կազմում։

Հասկանալի է, որ եղանակավորող բառերը կարող են գործածվել որպես թերի նախադասություններ։

— Մենք որոշել ենք մեզ հետ տանել նաև Վահեին։

— Միա՞յն Վահեին։

— Իսկ ընկեր Սարգսյանն ինձ խոստացել է իր հետ տանել։

— Գուցե տանի, բայց...

Եղանակավորող բառերն ու բառակապակցությունները շարահյուսական մակարդակում դառնում են նաև միջանկյալ բառեր։

Այդ մասին խոսվում է նաև պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագրքի համապատասխան էջերում, ուր մեկնաբանելով միջանկյալ բառերը (այո, ոչ, իհարկե), հեղինակը հնարավորին չափ անդրադառնում է նրանց շարադասությանն ու կետադրությանը։

Վ. Առաքելյանն իր «Հայերենի շարահյուսություն» գրքի Բ հատորում բավականին հանգամանորեն է քննում միջանկյալության քերականական երևույթը, միջանկյալ բառերը, բառակապակցությունները՝ դրանք արժեքավորելով որպես հետաքրքրական քերականական իրողություն։

Սովորաբար միջանկյալ են համարվում այն բառերը, որոնք նախադասության կամ նրա որևէ անդամի հետ քերականորեն չեն կապվում, ընդհակառակը, հնչերանգային բաժանվածությամբ նախադասության կամ նրա որևէ անդամի վրա դրվելով, արտահայտում են զանազան վերաբերմունքներ։

---

8 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատ. Բ, Երևան, 1964, էջ 58։

Ըստ Վ. Առաքելյանի՝ երբեմն էլ միջանկյալ բառերը դառնում են նախադասության անդամներ. «Նայած ինչպես են կիրառվում, հարում են այս կամ այն բառին և վերջինիս հետ քերականական կապի մեջ են մտնում»։ «Մի օր էլ. մատնուրյամբ, մի գյուղում բռնվեց նա» նախադասության մեջ ընդգծված բառը Վ. Առաքելյանը միջանկյալ է համարում, իսկ միևնույն նախադասության մեջ նույն բառը՝ հիմունքի պարագա[9], երբ արդեն վերանում են հնչերանգային բաժանվածությունը (հետևաբար և՝ ստորակետները), խոսողի վերաբերմունքի տարրը և այլն։ Փաստորեն քերականական կապ է ստեղծվում տվյալ բառի ու բռնվեց բայի միջև՝ կազմվում է լրացում-լրացյալի կապակցություն։ Մեր կողմից եղանակավորող համարված բառերը Վ. Առաքելյանը զետեղում է միջանկյալ բառերի մեջ։ Ավելին. միջանկյալ բառեր են համարվում նաև «գոյականներ, ածականներ, բայեր, մակբայներ, շաղկապներ ու եղանակավորող բառեր, դրանք կարող են նյութական նշանակությունից զուրկ չլինել, բայց երբ նախադասության որևէ անդամի լրացում չեն և հնչերանգով էլ անջատվում են նախադասության արտաբերման ամբողջ շղթայից, համարվում են միջանկյալ»[10]։

Լիովին համաձայնվելով Վ. Առաքելյանի հետ (մի փոքր վերապահումով), կարծում ենք, որ միջանկյալ բառերը հստակ ըմբռնելու համար անհրաժեշտ է որոշակիորեն տարբերակել նախադասության անդամ չդարձող իսկական միջանկյալ բառերը պայմանականներից՝ նախադասության անդամ դարձողներից։ Բերենք միջանկյալ բառերով օրինակներ. Կմեկնես, հավանաբար, դորանից հետո, տե՛ր Մամիկոնեից (ՍԶՎ, էջ 4)։ Զրուցում են, այո, որ իբր բացահայտ կարևորություն չի տալիս արքունիքին, և իբր թե նորան համակիր են հարևան նախարարները... (նույն տեղում, էջ 305)։— Չէ, դժվար թե.— մտախոհ արձագանքեց նախագահը, բայց դե որ գողանում էիք՝ կարգին գողանայիք, էլի... (ՀՄՕ, էջ 96)։ Երկրին անծանոթ՝ նա, հարկավ, կարիք պիտի զգա խորհուրդների, նաև, իհարկե, շատ ու շատ բաների (ՍԶՎ, էջ 66)։

Եղանակավորող բառերը կարող են հանդես գալ որպես նախադասության բնույթը և իմաստը փոխողներ։ Նրանք, ավելանալով նախադասության սկզբում, վերջում, մեջտեղում, կարող են շրջել այդ նախադասության արտահայտած միտքը՝ հաստատական նախադասությունները կդարձնեն ժխտական, հարցական, կասկածական, հորդորական և այլն։ Օրինակ՝ «Ես խոսեցի իմ ուսուցչի հետ» նախադասությունը պատմողական է, այն կարող է նոր իմաստներ ձեռք բերել համապատասխան եղանակավորող բառերի շնորհիվ։ Այսպես. Մի՞թե ես խոսեցի իմ ուսուցչի հետ։ Ես, երևի, խոսեցի իմ ուսուցչի հետ։ Ես միայն խոսեցի իմ ուսուցչի հետ։ Ահա, խնդրեմ, ես խոսեցի իմ ուսուցչի հետ։ Ես, դժբախտաբար, խոսեցի իմ ուսուցչի հետ։ Ինչէ, ես խոսեցի իմ ուսուցչի հետ։ Ես, ընդհակառակն, խոսեցի իմ ուսուցչի հետ և այլն, և այլն։

Եղանակավորող բառերը կարող են կատարել նաև շաղկապական ֆունկցիա։ Քանի որ եղանակավորող բառերը նախադասությունների մեջ ստորադասական հարաբերություններ չեն ցույց տալիս, ուստի չեն կարող հանդես գալ ստորադասական շաղկապների դերում, չնայած երկրորդական նախա-

9 Տե՛ս նույն տեղում, էջ 435։
10 Նույն տեղում, էջ 437։

դասությունների մեջ նրանք կարող են հանդես գալ։ Որոշ եղանակավորող բառեր պրոֆ. Մ. Աբեղյանն անվանում է ստորադասական շաղկապներ՝ զիջական, նպատակի[11]։ Մեր կարծիքով արդի լեզվամտածողությամբ նրանք սուբյեկտիվ վերաբերական իմաստ են արտահայտում։ Դրանք կարող են հավասարապես հանդես գալ թե՛ պարզ նախադասություններում, թե՛ շարահարական կապակցություններում։ Օրինակ՝ արդյոք, միթե, գուցե (գուցե թե), միգուցե, երևի, չլինի, չլինի թե, իսում (խո, հո), դե եղանակավորող բառերը հաճախ հանդես են գալիս ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններում։ Օրինակ. Հիշո՞ւմ ես, երևի... հաշտությունը կայանալուց հետո Վասակ իշխանը դադարեց արքունիք հաճախելուց (ՄԴՄ, էջ 129)։ Եվ տարակուսորեն մտածում էր՝ մի՞գուցե ետ վերադառնար հարսը։ Եվ նա մատը կծեց՝ չլինի՞ թե իրեն դատի տված լինի։ Ես խորհում էի՝ գուցե թե գա[12]։

Կարող են հանդես գալ անուղղակի խնդիր երկրորդական նախադասություններում (Սպասում էր՝ մի՞թե կարող է եղբայրը չվերադառնալ։ Հավատացած եմ՝ խոմ նա չի բարեհաճի մեզ հետ նստելու։ Վստահ եմ՝ ախր Արամը աղնիվ քաղաքացի է)։ Հաճախ կարող են զանազան պարագայական երկրորդական նախադասություններ կապակցել. օրինակ՝ ասես (թե), կասես (թե), կարծես (թե), կարծես, ոնց որ, կարծյոք բառերը կարող են կապակցել ձևի պարագա երկրորդական նախադասություններ (...Այնպես ասաց, ասես ուներ երկնքի ալմասը ձեռին (Ե. Չարենց)։ Այնպես ներս մտավ, կասես կատուն դուռը բացեց։ Դու ինձ հետ այնպես ես խոսում, կարծես երկնքից նոր ես իջել և ոչնչի էլ տեղյակ չես։ Ս. Աբրահամյանը ասես, ասես թե, կարծես թե, ոնց որ, կարծես և այս կարգի բառերը զետեղում է համեմատության շաղկապների շարքում[13], թեև դրանք քննել է եղանակավորող բառերի մեջ։ Այդ բառերը երկբայական եղանակավորող բառերի մեջ են մտնում, թեև կարող են շաղկապական ֆունկցիա էլ կատարել։

Եղանակավորող բառերի մի մասը կարող է շաղկապել շարահարական կապակցություններ՝ պատճառի պարագա երկրորդական նախադասություններ (Պարզ է, թե ինչու աշխատանքի չի եկել. չէ՞ որ հիվանդ է։ Չի կարելի ձեռք տալ նրան. ախր նա շուտ կոտրվող է։ Մի անտեղի անհանգստանաք. գուցե թե հենց հիմա էլ գտնվի)։ Նպատակի պարագա երկրորդական նախադասություններ (Մեջքը թափ տվեք, թող մին էլ բռնի։ Փնտրիր պահարանը. գուցե մի բան ճարենք ուտելու)[14]։ Պայմանի պարագա (Ամեն ինչ կանեմ քեզ համար, միայն ինձ լսես)։ Հիմունքի պարագա (Նա հեռացվեց գործից. ախր դիրեկտորն էր հրամայել)։ Եղանակավորող բառերի մեծ մասը թեև գործածվում է համադասական նախադասություններում՝ կատարելով համադասական շաղկապի դեր, բայց նրանք շաղկապներ չեն դառնում և ցանկացած դեպքում հանդես են գալիս պարզ նախադասություններում։

Այդի չես գնում, գուցե հացի գնաս։ Դեռ ինձ մոտ մնա, միայն քաղաք գնալը մտքիցդ հանիր։ Դրեթե չես խոսում, գոնե մի բան ասա, էլի և նման նախադասություններում ընդգծվածները եղանակավորող բառեր են։ Ճիշտ է

---

11 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 646—651։

12 Կարող է մտածվել և վերաբերության անուղղակի խնդիր։

13 Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1965, էջ 477։

14 Այսպիսի նախադասությունները շատ մոտ են համադասությանը։

Ս. Աբրահամյանի այն միտքը, թե «եղանակավորող բառերը գործածվելով նախադասության սկզբում, հաճախ վերաբերում են նախորդ նախադասությանը, որի մտքի նկատմամբ արտահայտում են տարբեր բնույթի վերաբերմունք (ընդգծումը մերն է— Վ. Ա.), դրանով իսկ կապ է ստեղծվում այդ նախադասությունների միջև»[15]։

Այժմ մի քանի խոսք եղանակավորող բառերի հետ կապված շարադասության և կետադրության վերաբերյալ։ Եղանակավորող բառերը, արտահայտելով խոսողի զանազան վերաբերությունները, կարող են դրվել թե՛ նախադասության որևիցե անդամի, թե՛ ամբողջ նախադասության ու նախադասությունների (պարբերության) վրա։

Այստեղից դժվար չէ կռահել, որ եղանակավորող բառերն ու բառակապակցությունները կարող են ունենալ ազատ շարադասություն։ Համեմատաբար նրանք ավելի շատ դրվում են նախադասության, նրա բայ-ստորոգյալի կամ նախադասության որևէ անդամի վրա, քան՝ նախադասությունների։

Ինչպես ասել ենք, եղանակավորող բառերը գործածվում են միջադաս, նախադաս, վերջադաս շարադասությամբ։ Դա բխում է նրանց «միջանկյալության» հատկանիշից։

Նախապես նշենք, որ եղանակավորող բառերը «անջատական» բնույթի խոսքի մաս են։ Լեզվի զարգացման ընթացքում, բառօգտագործման հաճախականության հետևանքով առավել ևս ակնառու կերպով է դրսևորվում նրանց հնչերանգը՝ առոգանությունը։ Իսկ դա կետադրության նշանների հիմքն է։ Եղանակավորող բառերն ու բառակապակցությունները իրենց հնչերանգով սերտորեն կապված են տրոհության և առոգանության նշանների հետ։ Օրինակ՝ շեշտը նախ և առաջ պայմանավորում է ստորակետի առկայությունը, մինչդեռ հարցական նշանը՝ ոչ։ Իսկ երկարացման նշանն ավելի շատ է պայմանավորում ստորակետի առկայությունը, քան հարցականը։

Ճիշտ է, ժամանակակից հայերենի եղանակավորող բառերից միայն հարցականներն են, որ կրում են հարցական նշան, բայց դա բնավ չի նշանակում, թե մյուս տեսակները հարկ եղած դեպքում չեն կարող հարցական նշան ընդունել։ Նախ՝ բերենք օրինակներ հարցական եղանակավորող բառերից.

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի
Մա՞հն է, արդյո՞ք, թե նինջը քեզ
Պատել, պայծա՛ռ Նաիրի։
(Վ. Տերյան)։

Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն (Հ. Թ., Թմկաբերդի առումը)։

Մենք արդեն խոսել ենք այն հարցական եղանակավորող բառերի մասին, որոնց մի մասը իր մեջ ունի երկբայական տարրեր, և հարցական նշան չի կրում, թեև հարցականությունն արտահայտվում է նրանց շնորհիվ (Միգուցե դո՞ւ ես մեղավոր։ Գուցե եկե՞լ է արդեն)։ Ընդգծված բառերն օգնում են հարցական հնչերանգի դրսևորմանը։

15 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 425։

Մենք ասացինք, որ հարցական եղանակավորող բառերը, քանի որ կըրում են հարցական նշան, անջատական-տրոհական նրբերանգ չունեն, հետևաբար և նախադասության մյուս անդամներից ստորակետով չեն բաժանվում։ Դա, իրոք, այդպես է, բայց չպիտի մոռանալ նաև նրանց «միջանկյալության» փաստը։ Այդ պատճառով էլ մեր գրողներից շատերի երկերում հարցական եղանակավորող բառերը երբեմն անջատվում են ստորակետով։ Ահա. Սխալվո՞ւմ էի, արդյոք, ով կարող է ասել (ԼՄՄ, էջ 27)։ Արդյոք, այդ երիտասարդ կինը նրա աղջի՞կն է իսկապես (Շեկ, էջ 427)։ Մի՞թե, մի՞թե, նա այս խոսքերը լսում է մի կենդանի արարածի բերանից, մի՞թե դա Սուսանն է կանգնած յուր առջև (նույն տեղում, էջ 284)։ Կա և հետևյալ նրբությունը. երկբայական եղանակավորող բառերը հաճախ հարցական նշան են ընդունում՝ միանգամ ևս ապացուցելով հարցականների հետ ունեցած իրենց սերտ հարաբերակցությունը (— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր է քաշում ծառան (Հ. Թ., «Տերն ու ծառան»)։ Չլինի՞ թե նրանք մի բան խաղացին նրա գլխին (ԱԲԵ, էջ 22)։

Իհարկե, ինչպես ամեն մի բառ, այնպես էլ եղանակավորող բառերը, կարող են հարկ եղած դեպքում գործածվել հարցական առոգանությամբ (Ասում են՝ հացը պիտի էժանանա, հա՞: Իսկապե՞ս, ինչու չի գալիս բա։ Մի՞ն քեզ համար է գնել, չէ՞: Ներս գամ, այո՞): Որպես կանոն ցուցական, հորդորական-խնդրական, ըղձական, զիջական, ղղջական եղանակավորող բառերը հարցական նշանով չեն գործածվում։

Հաստատական եղանակավորող բառերի մի մասը, ինչպես արդեն նշել ենք, հարցական առոգանությամբ հարում են հորդորական-խնդրական տեսակին։ Օրինակներ՝ —Կբերեն ու ջաններն էլ դուս կգա, շլինքներն էլ օխտը գաղ կերկարի,— ասաց նա,— հիմի անխելք ախպերտանց հոգին էս թղթի միջին իմ ջիբումն ա. խեղճերը հենց գիտեն, թե էս ա, էս բոլոր փողերն էլ գնացին մովրովի ջիբը,— ո՞նց չէ գոգդ դեմ արա (ՊԵԺ, էջ 47)։ Ախր չէ՞ որ ալլահ կա էնտեղ (ՀԹԵ, էջ 373)։ Հայտարարված է, չէ՞, որ դասախոսություն է (ԴՍԹ, էջ 19)։ Եվ նրա մորուքն ալեխառն էր, չէ՞ (ՇՀ, էջ 24)։ Բայց դու էլ մեզ հետ կգաս, հա՞: Ուրեմն՝ դու այսքան մեծացել ես, հա՞: Արդեն մեզ մոռացել է, բա՞:

Ինչպես վերը նշվեց, եղանակավորող բառերը հաճախ իրենց վրա կրում են բացականչական նշան։ Այդ առումով էլ զգալապես մոտենում են ձայնարկությանը։ Բայց միայն մոտենում են, չեն նույնանում նրանց։ Ահավասիկ. Քամ լիցի, եթե համարձակվեմ այդ չափ լրբանալ քո առաջ, տե՛ր արքա...— պատասխանեց իշխանը հուզվելով (ՍՁՎ, էջ 319)։— Ալլահ կա, հապա՛ (ՀԹԵ, էջ 372)։

— Բա՛, սրան Թիֆլիս կասեն, է՞ (Հ. Թ., «Գիքորը»)։

— Խնդրեմ, համեցե՛ք, նստեցեք, եղբայր իմ պատվական։

Եղանակավորող բառերն ու բառակապակցությունները, իրենց բնույթին համապատասխան, հաճախ շեշտով են հանդես գալիս։ Շեշտելով կա՛մ տվյալ բառը, կա՛մ ամբողջ նախադասության միտքը՝ խոսողն իր հաստատական, ժխտական, հորդորական և այլ վերաբերմունքն է արտահայտում իրականության նկատմամբ։ Օրինակ. գտնվեցան մայրեր, ո՛չ, գազան արարածներ, որոնք իբր թե իրանց մանուկների տանջանքը չտեսնելու համար, մորթեցին նրանց և կերան (ՄԳՄ, էջ 74)։ —Այո՛, այն ժամանակ մեր իշխանները կծաղ-

րեին Սահակ Սևադային, կասեին, թե՝ Գարդմանա հզոր իշխանը յուր դուստրը տվել է լեռներում ապրող մի հովվի, այնպես չէ՞ (Ն. տ., էջ 34)։ — Ունեն, բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են (Հ. Թ., «Գիքորը»)։ Եղանակավորող բառերը տրոհական-անջատական բնույթ ունեն և այդ իսկ պատճառով էլ նախադասության մյուս անդամներից սովորաբար անջատվում են ստորակետով։ Անջատականության տեսակետից եղանակավորող բառերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ տրոհվող և չտրոհվող (կա և միջին խումբ, որի կազմի մեջ մտնող բառերը և՛ տրոհվում են, և՛ չեն տրոհվում՝ կախված խոսողի վերաբերմունքից ու կամքից)։ Տրոհվող խմբի մեջ են դասվում հաստատական, ժխտական, երկբայական, զղջական, զիջական, հորդորական, մեկնական, լրացական-անջատական տեսակները, իսկ չտրոհվողի մեջ՝ սաստկական, սահմանափակման, ըղձական, ցուցական, մասամբ էլ՝ հարցական և կամային տեսակները։ Միջին խմբում են հարցական, կամային և ժխտական տեսակները։

Որպես կանոն, տրոհվող եղանակավորող բառերը նախադասության մյուս անդամներից անջատվում են ստորակետով։ Օրինակներ. — Անտարակույս, դա մի դև է լինելու, որ մի սուրբի անեծքով ստացել է գայլի կերպարանք (ՐԵԺ, էջ 111)։ Ճշմարիտ, դուք մի կատարյալ երազահան եք (Ն. տ., էջ 87)։ Ի վերջո, սրա տալիք փողի քանակությունն էլ ուզածի չափ նշանակեց... (ՊԵԺ, էջ 46)։ Համենայն դեպս, Վարազդատ արքային ողջունեց հիշածս Մուշել ստրատելատը, որը, ի դեպ, վրաս թողեց կորովի, բանագետ մարդու տպավորություն (ՍԶՎ, էջ 104)։ Տիկին Թարլանը, կարծես թե, կշտացել էր աշխարհից (ՐԵԺ, էջ 79)։ Ինձ համար նեղություն չէ, խնդրեմ (ՍԶՎ, էջ 140)։ Սկզբից Հոռոմը, ոչինչ, մնում էր մեր զրույցին անտարբեր (Ն. տ., էջ 223)։ Բայց, ցավոք, ներկայացման բոլոր բաղկացուցիչները չեն, որ անհրաժեշտ մակարդակն ունեն («Սովետական արվեստ», էջ 44)։

Ի դեպ, հայ դասական գրողների երկերում բազմիցս հանդիպել ենք բութի, որ նշանակված է տրոհվող եղանակավորող բառերի վրա։ Ահավասիկ. Միով բանիվ՝ հաղորդեց թագավորին այն ամենը, ինչ որ կարևոր էր նրան գիտենալ յուր առաջիկա արշավանքը հաջողությամբ պսակելու կամ վերահաս վտանգից խուսափելու համար (ՄԳՄ, էջ 175)։ Արդարև՝ տուն դառնալուց հետո՝ մի որոշ ժամանակից հետո վարպետ Պետրոսին ծնվում է մի աղջիկ, որի անունը դնում են Սալբի (ՐԵԺ, էջ 88)։

Նկատելի են այնպիսի տրոհվող եղանակավորող բառեր, որոնք հանդես են գալիս առանց որևէ կետադրական նշանի, թեև նրա կարիքը զգացվում է։

Ահա օրինակներ.

Եվ անշուշտ մի օր սրա շիրիմն էլ
Կծածկի նույնպես մամուռը կանաչ (ՀԹԵ, էջ 82)։

Ամպերը սակայն ինչպես զով անեն (ՊՍԱԶ, էջ 51)։ Եվ համարյա թե իրոք քերեցին (Ն. տ., էջ 205)։

Եվ, ընդհակառակն, մեր գրողների կողմից տրոհվում են հաճախ այն եղանակավորող բառերը, որոնք ամենևին անջատական նրբերանգ չեն արտահայտում։ Այսպես. Գոնե, վստահ եմ կարելի է այդ Դանեմարքայում (ՇՀ, էջ 38)։ —Կես ժամով, թեկուզ, ձեզ պետք է տեսնեմ այդ հագուստով,— պնդեց շահի ադյուտանտը (ԳՍԹ, էջ 92)։ Ապա. ուղիղ կանգնիր, վեհապետ,

փորձենք քո տղամարդկությունը (Ն. տ., էջ 372)։ Գոնյա, առ հոգիս (ՐԵԺ, էջ 123)։

Ինչպես վերը նշվեց, չտրոհվող եղանակավորող բառերի մեջ են մտնում սաստկական, սահմանափակման, ըղձական, ցուցական, մասամբ էլ հարցական և կամային տեսակները։ Արդ՝ բերենք օրինակներ հիշյալ տեսակներից. Պավլեն կափարիչը բարձրացնել իսկ չգիտի (ՀՄՕ, էջ 126)։ Նրանց մեծ մասը արևմտյան ֆրոնտում մասնակցել էր այնպիսի պատերազմների, որոնց համեմատությամբ տեղական կռիվները սոսկ «գլխացավանք» էին (ԱԲԵ, էջ 380)։ Դեր ողորմի տվեք հոգուն (ՀԹԵ, էջ 20)։ Ահա ոճրամիտ մեր ոսոխը չար Շղթա է բերում, լուծ ու կապանքները... (Ա. Իսահակյան)։ —Տո դե ճակատի գիր ա էլի, հո նրանց էլ Նեսոն չի խեղդել (ՀԹԵ, էջ 380)։ Ասում խելքդ չե՞ս թոցրել (ՍԹԱՕ, էջ 343)։

Այսպես կոչված «միջին խմբի» եղանակավորող բառերը և՛ տրոհվում են, և՛ չեն տրոհվում, նայած ինչպիսի վերաբերմունք է արտահայտվում դրանցով։ Սովորաբար ցուցական, կամային, ժխտական և այլ եղանակավորող բառերը (բացի ոչ և չէ-ից)[16] չեն տրոհվում, բայց երբեմն էլ հանդիպում ենք տրոհված ձևերի։ Ահավասիկ. Դե, հիմա վահան ո՞ւմ է պետք որ (Թերթ)։ Դե ասա, մի խոսքով, նրանց երեսի մեռոնը գնացել է (ՆԴՊ, էջ 180)։ Ահա և մենք եկանք։ Բայց, առա, մոտենում է թագուհուն սարիքավոր մի կին... (ՄԳՄ, էջ 11)։ Այնուամենայնիվ. շատ բան պիտի խոսեմ քեզ հետ, որովհետև ժամանակը կարճ է, պետք է շտապել Սևագայի մոտ (ՄԳՄ, էջ 106)։ Չնայած խոստացել էր լավ սովորել, բայց այնուամենայնիվ չկատարեց խոստումը։

Բոլոր այն եղանակավորող բառերը, որոնք իմաստով, հնչերանգով և շարադասությամբ բոլորովին չեն ձուլվում նախադասությանը, այլ արտահայտում են խոսողի զանազան վերաբերություններ (հաստատում, ժխտում, տարակուսանք, մեկնաբանում, հորդորանք, ներհակություն և այլն), տրոհվում են՝ նախադասության մյուս անդամներից բաժանվելով ստորակետով։ Մյուս եղանակավորող բառերը, որոնք չունեն վերոհիշյալ հատկանիշները, չեն տրոհվում, որովհետև դրվում են նախադասության որևէ անդամի վրա։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, արդի գրական հայերենում եղանակավորող բառերի կետադրության հարցում միօրինակություն չկա։ Եվ դա պատահական չէ, քանի որ եղանակավորող բառերի մեծ մասը հնչերանգով բաժանվում է նախադասության մյուս անդամներից, կամ էլ դրվում է նախադասության ցանկացած անդամի վրա, ապա, չդառնալով նրա լրացումը, կարող է ուզած ժամանակ հնչերանգով անջատվել նրանից՝ կերպավորելով ամբողջ նախադասությունը։ Այն եղանակավորող բառերը, որոնք դրվում են նախադասության որևէ անդամի վրա, չեն պահանջում տրոհության նշաններ (սաստկական, մասնական և այլն)։ Ցուցական եղանակավորող բառերը, հիշտ է, մեծ մասամբ նախադասության ստորոգման հետ են կապվում, բայց, այնուհանդերձ, իրենց յուրահատուկ հնչերանգով հիմնականում կապվում են նախադասության մտքի հետ։ Նրանք, սովորաբար, հանդես են գալիս նախադասության սկզբում և, որպես կանոն, հնչերանգային բաժանվածություն չեն

16 Հաստատական և ժխտական եղանակավորող բառերից այո-ն (հա), ոչ-ը (չէ) ավելի շատ մի յուրահատուկ նախադասություններ են կազմում, որի հետևանքով դժվարանում ես հաճախ որոշել նրանց բառական և նախադասությանը համարժեք հատկանիշների սահմանները։

ցուցաբերում, իսկ միջադաս կիրառությամբ՝ ցուցաբերում է։ Սովորաբար, ցուցական եղանակավորող բառերը նախադասության վերջում չեն դրվում, քանի որ խոսողը այդ բառերով մատնացույց է անում խոսելու պահի հետ առնչվող առարկա և այլն։ Ցուցական եղանակավորող բառերը, անգամ նախադասության սկզբում գտնվելով, կարող են հնչերանգով բաժանվել, ընդունել բութ, ստորակետ, միջակետ, եթե խոսողը այդ բառերով արտահայտում է իր ամփոփիչ, լրացական վերաբերմունքը։

Հարցական եղանակավորող բառերը, իրենց հարցական նրբերանգի շնորհիվ նախադասության մյուս անդամներից առոգանական դադարով չեն բաժանվում, մանավանդ երբ դրվում են նախադասության սկզբում։ Նշեցինք, որ միջադաս և մասամբ վերջադաս կիրառվելիս դրանք երբեմն դրսևորում են հնչերանգային բաժանվածություն (բացառությամբ հո, խո, խոմ բառերից)։

Ժխտական եղանակավորող բառերից ոչ–ն ու չէ–ն, քանի որ ունեն ուրույն նախադասության արժեք, հնչերանգով են բաժանվում նախադասության մյուս անդամներից (տրոհվում են ստորակետով)։ Մյուս ժխտականները, մակբայաբար գործածվելիս, կապվելով նախադասության բայ-ստորոգյալի կամ ածական-որոշչի հետ, տրոհման կարիք չեն զգում (Նա բնավ անգրագետ է։ Ամենևին չգիտի դասը...)։ Որպես եղանակավորող բառ գործածվելիս, պարզ է, նրանք տրոհվում են այնպես, ինչպես ոչ–ն ու չէ–ն։

Անջատական-լրացական, զիջական, զղջական և հաստատական եղանակավորող բառերը, չկապվելով նախադասության մտքին, միշտ հանդես են գալիս հնչերանգային բաժանվածությամբ (տրոհվում են ստորակետով)։ Հասկանալի է, որ այդ տեսակներին պատկանող բառերը մակբայաբար գործածվելիս տրոհության նշան չեն պահանջում (ի դեպ, ի միջի այլոց, ցավոք, ի վերջո, վերջիվերջո...)։

Երկբայականները ևս կապվում են, հիմնականում, նախադասության ստորոգման հետ, այսինքն՝ դրվում են նախադասության վրա։ Այստեղ պիտի հաշվի առնենք մի շատ կարևոր հանգամանք. հնչերանգը սերտորեն առնչվում է շարադասության հետ։ Երբ բառը նախադաս է գործածվում, ակնառու չի դրսևորվում հնչերանգային անջատվածությունը։ Հատկապես միջադաս գործածության ժամանակ երկբայականները (և ոչ միայն նրանք) նախադասության մյուս անդամներից հնչերանգով բաժանվում են (և, պատահական չէ, որ նրանք հորջորջվել են «միջանկյալ բառեր»)։

Ամփոփենք։ Քանի որ եղանակավորող բառերն ունեն արտահայտչական բազմազանություն ու շատ նրբերանգներ, ձկուն շարադասություն՝ կապված խոսողի վերաբերմունքի հետ, ուստի նախադասության վրա դրվող եղանակավորող բառերը հանդես են գալիս անջատական հնչերանգով (հետևաբար անջատվում են ստորակետով), իսկ եթե տվյալ բառը եղանակավորում է նախադասության որևէ անդամը (շեշտում, հարցականի, տարակուսանքի տակ է առնում կամ բացականչական առոգանությամբ գործածվում), ապա հնչերանգային բաժանվածություն հանդես չի գալիս, ուստի տրոհության նշան չենք դնում։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

ԱԲԵ, Ակսել Բակունց, երկեր, հատ. 1, Երևան, 1965։
ԴՍԲ, Գարեգին Սևունց, Թեհրան, հատ. 2, Երևան, 1963։
ԼՄՄ, Լեո, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1962։

ԾԹԱՕ, Ծերուն Թորգոմյան, Անմոռաց օրեր, Երևան, 1967։
ՀԹԵ, Հովհաննես Թումանյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1958։
ՀՄՕ, Հրանտ Մաթևոսյան, Օգոստոս, Երևան, 1967։
ՄԴՄ, Մուրացան, Դևորգ Մարզպետունի, Երևան, 1963։
ՆԴՊ, Նար-Դոս, Պայքար, Երևան, 1957։
ՇԵԼԺ, Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950։
ՇՀ, Շեքսպիր, Համլետ, Երևան, 1964։
ՊԵԺ, Պերճ Պռոշյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1962։
ՊՍԱՋ, Պարույր Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1966։
ՍՋՎ, Ստեփան Զորյան, Վարազդատ, Երևան, 1967։
ՐԵԺ, Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1962։

СИНТАКСИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ МОДАЛЬНЫХ СЛОВ, ИХ МЕСТО В ПРЕДЛОЖЕНИИ И ПУНКТУАЦИЯ

В. Г. АВАКЯН

(Резюме)

Модальные слова в речи могут выступать в роли слова-предложения, выразительного и неполного предложения, вводных слов, а также служить переосмысляющими элементами предложения. В предложении они могут находиться в начале, в середине и в конце, отделяясь от остальных членов предложения в основном запятой. Выдвигаются некоторые соображения о правильной пунктуации при модальных словах.